

Վրաստանի պետական անվտանգության նախարար Վալերի Խապուրձանիա երէկ յայտարարեց, թէ բացառապէս Վրաստանի նախկին նախագահ Չիխաի Կամսախուրտիայի կողմնակից նախկին պիւտոնականներէ բաղկացած խմբակ մը, որ ահաբեկչական արարք պատրաստած է նախագահ Էտուարտ Շեարտնաձէի դէմ: Ապահովական մարմինները յայտնաբերած են վէնքի եւ պիւսմթերքի մեծ պահեստ, Մցխեթայի մօտ: Ըստ ոչ պաշտօնական աղբիւրներու, Շեարտնաձէի դէմ մահափորձ մը ձախողած է: Ընդդիմադիր մամուլը այս գծով արձագանգած է, սակայն պետական շրջանակներ մահափորձի մասին ոչինչ կ'ըսեն:

ԼԻԲԱՆԱՆ ՉԻ ԿՐԵԱՐ ԲԱՐԳԱՒԱԾԻԼ ԵԹԵ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾԸ ՉՈՐԴԵԳՐԵ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ



Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ կոչ ուղղեց քաղաքական բարձր մակարդակի գործունէութիւն ցուցաբերելու Լիբանանի մէջ, նկատի ունենալով ազգային անբողջականութիւնը եւ վերջ տալու այն նպատակներուն, որոնց ետին թաքնուած են համայնքային, յարանուանական եւ տեղայնական նկատառումներ: Ան շեշտեց, որ Լիբանան չի կրնար բարգաւաճիլ կամ յառաջդիմութիւն արձանագրել եթէ բոլոր կողմերը չմէկտեղուին Լիբանանի գերագոյն շահերու ապահովման հովանիին տակ:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ մինչեւ իր նախագահութեան նստաշրջանի արարք ինք պիտի ծառայէ ամրապնդելու օրէնքի եւ հաստատութեան պետութեան իր երդումը, պետութիւն մը, որ կ'իշխեն իրաւունքն ու արդարութիւնը:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ լիբանանցի երիտասարդ սերունդը անհամբեր կը սպասէ սման պետութեան մը կերտումին, որովհետեւ սպարած է պատերազմի եւ եղբայրասպան կոռուներու դառն մթնոլորտին մէջ:

Շարք' Էջ 2

ԹԵ՛ ԹԵ՛Լ ԱՒԻԻ, ԹԵ՛ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՔ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՒ ՉԻՆԱԴՈՒԼ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ...



Մինչ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն Մոսկուայի մէջ պատրաստակամութիւն կը յայտնէր տեսակցութիւն ունենալու պաղեստինցի պաշտօնակիցին՝ Ահմէտ Բորէյի հետ, պաղեստինցի արտաքին գործոց նախարար Նապիլ Շաաթ կը յայտարարէր, որ պաղեստինեան նոր կառավարութեան նախապատուութիւն վայելող հարցերէն մէկը պիտի ըլլայ պինդադրու մը հաստատել Իսրայէլի հետ՝ վերջ տալու համար աւելի քան երեք տարի առաջ ծայր տուած ինքիֆատային:

Շաաթ, որ կը խօսէր Մատրիտի մէջ, ըսաւ նաեւ, որ կապուած ենք անմիջապէս ետք, պաղեստինեան կառավարութիւնը պիտի սեռնարկէ պինդադրու բանակցութիւններուն: Շաաթ դիտել տուաւ, որ երկու կողմերը պէտք է հաստատեն պինդադրու մը ու յարգեն վային:

Շարք' Էջ 9

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ, ՆԻՆՈՑՄԻՆՏԱՅԻ ԵՒ ԾԱԼԿԱՅԻ ՄԷՉ ԸՆՏՐՈՒԱԾ ԵՆ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ

Նոյեմբեր 2ին Վրաստանի մէջ կայացած խորհրդարանական ընտրութիւններու նախնական արդիւնքներուն համաձայն, Վրաստանի հայաբնակ երեք շրջաններուն մէջ՝ Ախալքալաք, Նինոծմինտա եւ Ծալկա, ընտրուած են հայ պատգամաւորներ:

Ըստ «Ա-ինֆօ» լրատու գործակալութեան, նախնական տուեալներու համաձայն Ախալքալաքի մէջ Համլէթ Շախբեկեան ստացած է քուէներու 50 առ հարիւրէն անէին, իսկ միւս թեկնածուն՝ Համլէթ Մովսիսեան ստացած է 25 առ հարիւր:

Նինոծմինտայի մէջ թեկնածու Հենկէլ Մկրտչեան ստացած է քուէներուն 60 առ հարիւրը, իսկ Միքէլ Գրիգորեան՝ 40 առ հարիւրը:

Ծալկայի 14 հայար ընտրողներուն 7 հայարը քուէարկած է ի նպաստ Հայկ Մելքոնեանի, իսկ երկրորդ դիրքը կը գրաւէ Տալիկ Լապիճէ՝ 3500 քուէով: Ախալքալաքի որոշ տեղամասերու մէջ

ընտրութիւնները կրնան անվաւեր նկատուիլ, որովհետեւ չէ ապահովուած ընտրողներու նուազագոյն՝ մէկ երրորդի մասնակցութիւնը: Նոյն խնդիրը կայ նաեւ Վրաստանի այլ

շրջաններու մէջ: Վրաստանի խորհրդարանի Նոյեմբեր 2ին ընտրութիւններուն առնչութեամբ բողոքները կը վերաբերին ոչ միայն ընտրողներու Շարք' Էջ 10

ՊՈՒՇ ԿԸ ՇԵՆՈՐՀԱԻՈՐԷ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՒԸ, ՄԻԱԺՄԱՆԱԿ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵԼՈՎ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ԽԱՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Ազրբայձանի նախագահ Իլհամ Ալիեւի յղած է շնորհակցական ուղերձ մը, ուր հաստատած է Ազրբայձանի հետ Ուաշինկթընի յարաբերութիւնները զարգացնելու վճռակամութիւնը:

Պուշ միաժամանակ դժգոհութիւն եւ փոստանք յայտնած է Ազրբայձանի Հոկտեմբեր 15ի կայացած ընտրութիւններուն ընթացքին խախտումներու գծով: «Մենք նաեւ անհանգստացած ենք ընդդիմադիր ցուցարարներու նկատմամբ կառավարական մարմիններու կողմէ գործադրուած ընտրութեան, ներառեալ՝ ձերբակալութիւններու ի յուր», նշուած է ուղերձին մէջ:

Միացեալ Նահանգներու նախագահը յոյս յայտնած է, թէ Իլհամ Ալիեւ վճռական ջանքեր կը գործադրէ երկրին մէջ օրէնքի գերակայութիւնը ապահովելու համար, եւ «Ազրբայձան կը շարունակէ իր զարգացումը՝ ժողովրդավարութեան, քաղաքական ազատութիւններու եւ մարդկային իրաւանց յարգումի ճանապարհին վրայ»:

Պուշ նաեւ նշած է, թէ ինք կողմնակից է Լեոնային Ղարաբաղի տազնապի խաղաղ լուծման: «Անհրաժեշտ է շարունակել կողմնակցական շրջանին մէջ եւ անոր շուրջ խաղաղութեան ամրապնդումը, ինչպէս նաեւ ահաբեկչութեան դէմ պայքարին նպատակաւորուած մեր միացեալ ջանքերը», ընդգծած է Պուշ:

ԱՄԵՐԻԿԱՅԻՔ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ, ԹԵ՛ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՏԱՆ ԻՐԱՔԻ ՄԷՉ ԱՀԱՔԵԿԻԶՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՅ

Իրաքի մէջ պատերազմական գործողութիւններու արարքն ի վեր ցարդ իրենց ամէնէն պօրաւոր հարուածը ստացած ամերիկացիները կը յայտարարեն, թէ տեղի պիտի չտան ահաբեկիչներուն դիմաց: Պաշտօնատարներ դիտել տուին, որ ուղղաթիռն ջախջախումն ու աւելի ուշ ամերիկացի երկու գործարարներու սպանութիւնը պիտի չխախտեն ամերիկացիներուն յաղթանակի կամքը: Պաշտօնատարները խոստովանեցան սակայն, թէ այնքան ատեն որ Սատտամ չէ ձերբակալուած՝ դժուար պիտի ըլլայ կացութիւնը հակակշիռի տակ պահել եւ կայունութիւն հաստատել:

Սպիտակ Տան քանքեր Թրէնթ Տաֆի ըսաւ, որ ահաբեկիչները դաշնակից ուժերը եւ անմեղ իրաքցիներ կը սպաննեն, յուսալով որ այդ ձեւով կը հեռանան ամերիկացիները: Տաֆի շեշտեց սակայն, որ ինչ միջոցներու ալ դիմեն, ամերիկացիները պիտի չհեռանան Իրաքէն:

Ամերիկացի 16 պիւտոններ սպաննուած էին եւ 20 հոգի վիրաւորուած Կիրակի օր, երբ իրաքեան ընդդիմադիր ուժեր վար առին ուղղաթիռ մը, որ պիւտոնները Ֆայլոմային Պաղտատի օդակայանը կը տանէր: Ֆայլոմայի ձամբուն վրայ սպաննուեցան նաեւ ամերիկացի երկու գործարարներ:

Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներ փորձեցին նսեմացնել ուղղաթիռն յարձակումին տարողութիւնն ու ազդեցութիւնը: Պաշտպանութեան նախարար Տոնրլոյ Ռամսֆելտ ըսաւ, որ երկար ու դժուար պատերազմի մը ընթացքին պիտի պատահին աղէտներ ու ողբերգութիւններ, որոնք մաս կը կապեն այս պատերազմին: Ռամսֆելտ շեշտեց, որ այս պատերազմը յաղթանակով պիտի արարտի դաշնակից ուժերուն համար: Խօսելով Սատտամ Հիւսէյնը

Շարք' Էջ 9

ՓՈՒԹԻՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՉ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԻԵԼ ՇԱՐՈՆԸ

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն, որ Ռուսիա կ'այցելէ, երէկ կրեմլին մէջ տեսակցութիւն ունեցաւ նախագահ Վլատիմիր Փութինի հետ: Իր խօսքին մէջ, Շարոն ըսաւ, որ Իսրայէլ պատրաստ է գիշերումներ կատարելու, պայմանաւ որ անոնք չվնասեն հրէական պետութեան եւ անոր բնակչութեան ապահովութեան:

Շարոնի Մոսկուա այցելութեան գլխաւոր նպատակն է համոզել Փութինը, որ հրաժարի խաղաղութեան ճամբով քարտէսը Ապահովութեան Խորհուրդի բանաձեւի վերածելու ծրագիրէն: Քարտէսը արդէն իսկ կը վայելէ ՄԱԿի, Եւրոպական Միութեան, Ռուսիոյ եւ Միացեալ Նահանգներու գորակցութիւնը: Հակառակ այս գորակցութեան, Շարոն կ'ուզէ, որ ծրագիրը միջազգային ընտանիքին կողմէ որդեգրուած որոշումի վերածուի:

Մոսկուան սիրաշահելու քայլով մը, Շարոն յայտարարեց, որ պատրաստ է յառաջիկայ քանի մը օրերուն ընթացքին հանդիպում ունենալու պաղեստինցի վարչապետ Ահմէտ Բորէյի հետ: Իսրայէլեան պատուիրակութեան անդամներէն մէկը ըսաւ, որ այլ մակարդակի վրայ հանդիպումներ արդէն տեղի կ'ունենան: Ան շեշտեց, որ Շարոն — Բորէյ հանդիպումը կարեւոր է պաղեստինեան կառավարութեան կազմութեան:

Իր խօսքին մէջ, Շարոն ըսաւ նաեւ, որ Ռուսիա գլխաւոր դերակատար է միջազգային բեմին վրայ եւ թէ նախագահ Փութին Իսրայէլի իսկական մէկ բարեկամն է:

(ԱՖՓ)

ԶԱԽԱԽՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՕՐԷՆ ՄԵԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՅԵԼԵՑ



Կապակերպութեամբ Հ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի Յանձնախումբին եւ հովանաւորութեամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի, երէկ երեկոյան ժամը 8:00ին, Ազգային Լ. եւ Ս. Յակոբեան քոյէճին մէջ տեղի ունեցաւ Չախախի նուիրում յուսանկարչական ցուցահանդէսի բացումը: Բացումին ներկայ էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան, հայ կաթողիկէ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան եպս. Ազարեան, Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Արեգ Յովհաննիսեան, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեան, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Միլիթարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Գառնիկ Մկրտիչեան, Հայաստանի այս առիթով յատկապէս ժամանած բանաբաւ Հայկապ Ալվրցեան, որ այսօր երեկոյան լայն պիտի ունենայ Չախախի նուիրում ժողովրդային հաւաքին, եւ մեծ թիւով ազգայիններ:

Շարք' Էջ 2

**Ը. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ
ՋԱԽԱԽՔ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱԽԱՔ
Բանախօս՝ ԸՆԿ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՑԵԱՆ
●Գեղարուեստական յայտագիր
Այսօր՝ Երեքշաբթի, 4 Նոյեմբեր 2003, երեկոյան ժամը 8:00ին,
«Յ. Տեր Մելքոնեան» սրահին մէջ:**

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ Քորաթեմի մէջ ընդունեց քաղաքական անձնատրուքի ներքին և արտաքին բարձրաստիճան պաշտօնատարներ: Կատարուած քննարկումներուն ընթացքին տիրական եղաւ յառաջիկայ Հինգշաբթի օրուան կառավարութեան ժողովը: Ըստ վարչապետին, անիկա պիտի ընթանայ հանդարտ մթնոլորտի մէջ:

Վարչապետ Հարիրի ընդունեց երեսփոխաններ Անթուան Հատտատը եւ Նապէմ Խուրի, որոնց հետ քննարկեց ներլիբանանեան հարցեր, ինչպէս նաեւ Ամշիթ - Թանուրիի ճամբու նորոգութեան առնչուող հարցեր:

Վարչապետին այցելեց նաեւ երեսփոխան Հիւսէյն Համ Հասան, Պալապէթ-Հերմէլ երեսփոխանական պլոքի մէկ պատուիրակութեան ընկերակցութեամբ: Վարչապետը յայտնեց, որ Պալապէթ-Հերմէլի եւ Աքքարի կարիքները պիտի ըլլան կառավարութեան յաջորդ նիստի օրակարգի կէտերէն:

Համ Հասան իր կարգին շեշտեց, որ Ռայաթ-Պալապէթ միջապային ճամբան պէտք է անպայման նորոգուի:

Քորաթեմի հիւրերէն դարձան նաեւ երեսփոխաններ Ահմէթ Յարֆաթ, Ատնան Արաքժի եւ Ֆայսալ Տաուուտ:

ԶՕՐ. ԱՌՆԻ ԴԵՄ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՃԻՌԻ ՊԱՀԱՆՁ

Պէյրուսի աւագ քննիչ դատախազ Հաթեմ Մատի երեկ որոշում մը տուաւ զօր. Միշէլ Աունի դէմ՝ լիբանանեան կառավարութեան նկատմամբ անոր կատարած յայտարարութիւններուն համար, «որոնց նպատակն է դրացի երկիրներու հետ Լիբանանի յարաբերութիւնները խախտել»: Այս յայտարարութեանց համար կը պահանջուի զօր. Միշէլ Աունը դատապարտել քրէական յանցանքով եւ անոր սահմանել 3էն 15 տարւան բանտարկութեան պատիժ, տաժանակիր աշխատանքով:

Զօր. Աուն ամերիկեան Քոնկրէսի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբին մօտ կատարած էր յայտարարութիւններ, զօրակցելով Սուրիան հաշուետուութեան կանչելու ամերիկեան Քոնկրէսի օրինագիծին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● **ՆՈՐԿՐԳՐԱՐՈՒՄ** Նեպիի Պրորի երեկ ընդունեց երկրագործութեան նախարար Ալի Հասանի խալիբ եւ երեսփոխաններ Անուար Խալիլի ու Ֆայսալ Տաուուտը: Քննարկումի առարկայ դարձան խորհրդարանին կողմէ 2004ի պետութեան պիտուէի նախագիծը քննարկելու հիմնական տրամադրութիւնները:

● **ՓՈՒՆ** Վարչապետ Իսմաիլ Յարթա երկու շաբթուան տեւողութեամբ Եւրոպա եւ Միացեալ Նահանգներ կատարած իր շրջապտոյտէն ետք վերադարձաւ Պէյրուս եւ հետաձայնալին հաղորդակցութիւններ ունեցաւ իշխանութեան երեք պետներուն հետ եւ անոնց փոխանցեց իր շրջապտոյտին ընթացքին Միշէլ Արեւելի կացութեան նկատմամբ տպաւորութիւնները:

● **ՆԱԽԿԻՆ** Վարչապետ Ռաֆիք Սոյի երեկ կոչ ուղղեց բոլոր արաբական երկիրներու ղեկավարներուն՝ վեհաժողով մը գումարել եւ որդեգրել միասնութեան կեցուածք մը, դիմադրելու համար Պաղեստինի դէմ գործուող հարայիչեան բռնարարներուն, ինչպէս նաեւ վերջ տալու Իրաքի մէջ օտար բռնատիրութեան:

● **ԱՐՏԱՔԻՆ** հարցերու խորհրդարանական յանձնախումբի նախագահ երեսփոխան Ալի Խալիլ երեկ ընդունեց ամերիկեան դեսպանատան բարձրաստիճան պաշտօնատար ձերբակցութեան, որուն հետ քննարկեց շրջանային կացութիւնը:

● **ԲԱՆԱԿԻ** ընդհանուր

նոր հրամանատար Միշէլ Սլէյման երեկ Եարպէի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Գերմանիոյ դեսպան Կունսթըր Բնայը, որուն կ'ընկերակցէր դեսպանատան պիտուորական կցորդ Հելմուտ Ֆոն:

● **ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ** նախարար Մահմուտ Համուտ երեկ ընդունեց երեսփոխան Ռաժիհ Պարիսի, որուն հետ քննարկեց ներլիբանանեան հարցեր, շեշտելով տնտեսական վիճակի բարելաւման անհրաժեշտութիւնը: Համուտ ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Գերմանիոյ դեսպան Կունսթըր Բնայը, որուն հետ քննարկեց Պէյրուս - Պերլին երկկողմանի յարաբերութիւնները:

● **ՎԱՐՉԱՊԵՏ** շինութեան եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միշթաի երեկ ընդունեց Պէյրուսի երեսփոխանական պլոքի մէկ պատուիրակութիւնը, որուն հետ քննարկեց բարգաւաճման յատուկ հարցեր: Քննարկումներուն ընթացքին շեշտուեցաւ գիւղական ճամբաները վերանորոգելու անհրաժեշտութիւնը:

● **ՎԱՐՉԱՊԵՏ** հարցերու եւ արդարադատութեան խորհրդարանական յանձնախումբի երեկ, ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ ներքին գործոց եւ քաղաքապետութեանց հարցերու նախարար Էլիաս Մըրի, քննարկեց քաղաքապետութեան վերաբերող յատուկ օրինագիծերը:

● **ՊԵՏԱԿԱՆ** պիտուէի եւ ելեւմտական

հարցերու խորհրդարանական յանձնախումբը երեկ առաջարկեց կառավարութեան չեղեալ նկատելու Միշթայի մէջ Գրամատան հետ կնքուած կարգ մը համաձայնագիրներու, որոնք յատուկապէս բարգաւաճման կ'առնչուին:

● **ԼԻԲԱՆԱՆԻ** մէջ պաղեստինեան Այնէլ Հելուէ գաղթականներուն մէջ երեկ տեղի ունեցաւ ձեռնառումի պայթում մը Ֆարաջի շարժումի պատասխանատու Ապու Մոհամետ Խալիֆայի տան կից: Նշենք, որ պայթումը պատճառած է միայն նիւթական վնասներ:

● **ՀԸՉՊԱՆՆԱՅԻ** փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասեմ երեկ իֆթարի ընթացքին պաշտպանեց հարաւային Լիբանանի մէջ դիմադրութեան կողմէ հակաօդային հակադարձութիւնը, վերջ տալու համար իսրայէլեան օդուծի թռիչքներուն:

ԶԱԽԱԽՔԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն



Առաջնորդ սրբազանը կը փոխանցէ իր խօսքը



Հուրի Մայիսեան

Հ. Յ. Դ. Լիբանանի մէջ Հայ Դատի Մարմինին անունով բացման խօսքը կատարեց Հուրի Մայիսեան, որ դիտել տուաւ, թէ Հայ Դատը իր բազմաթիւ ձեռնարկներուն կողքին կը դիմագրաւէ նոր մարտահրաւէր մը՝ Պալապէթի հարցը: Ընդգծելով ջաւախքահայութեան քաղաքական, տնտեսական եւ ընկերային անմխիթար իրավիճակը եւ Հայաստանի համար Պալապէթի ռազմավարական կարեւորութիւնը, ան շեշտեց ջաւախքահայութեան օգնութեան փութալու անհրաժեշտութիւնը:

Հ. Մայիսեան յայտնեց, որ ամբողջ շաբթուան տեւողութեամբ Պալապէթի նուիրումով ալ ձեռնարկներու կողքին այս շրջուն ցուցահանդէսը կը նպատակադրէ լիբանանահայութիւնը աւելի հաղորդակից դարձնել Պալապէթի հարցին եւ անոր մօտ շեշտել ջաւախքահայութեան սատար հանդիսանալու անհրաժեշտութիւնը:

Բացման խօսքէն ետք իր խօսքը փոխանցեց առաջնորդ սրբազանը, որ ողջունելով Հայ Դատի Մարմինի նախաձեռնութիւնը, նշեց, թէ Մարմինը իր գործունէութեամբ կը շարունակէ հետապնդել հայութիւնը շահագրգռող հարցերը: «Այսօր համահայկական տարրուրութեամբ մեր ուշադրութիւնը կը կեդրոնանայ հայկական այլ շրջանի մը վրայ: Անկախացած է Հայաստանը»:

ԼԻԲԱՆԱՆ ԶԻ ԿՐՆԱՐ ԲԱՐԳԱՒԱԾԻԼ...

Շարունակուած Ա. Էջէն

Անդրադառնալով շրջանային կացութեան, նախագահ Լահուտ շեշտեց, որ Միշէլ Արեւելի իրադարձութիւնները կ'ենթադրեն լիբանանեան ներքին խիտ շարքերու կայունութիւնը, ինչպէս նաեւ պայքարի միասնականութիւնը, որովհետեւ անոնք ուժ կը ներշնչեն Լիբանանի դիմադրելու որեւէ հաւանական վտանգի, ինչպէս նաեւ կը զօրացնեն Լիբանանը: «Այսօր ինչ է այսօրուան պատագրուած հարաւային Լիբանանը», աւելցուց ան:

Նախագահ Լահուտ նկատել տուաւ, որ Լիբանան կրնայ իր յատուկ դերակատարութիւնը յաջողեցնել շրջանային թէ միջապային առումով, յատկապէս երբ կ'իրականանայ արդար եւ ամբողջական խաղաղութիւնը՝ ըստ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի որոշումներուն:

Երեկ, նախագահ Լահուտ Պապատայի մէջ ընդունեց տեղեկատուութեան նախարար Միշէլ Արեւի, որուն հետ քննարկեց լիբանանեան տեղեկատուութիւնը օտար երկիրներուն մէջ եւս յաջողեցնելու հեռանկարները: Նշենք, որ կառավարութիւնը տեղեկատուութեան նախարարութեան տրամադրած է 3 միլիար յ. ոսկի, որպէսզի Լիբանան կարենայ կեցուածք ձեռնարկել իր դէմ միջապային չափանիշներով կատարուող հակաքարտուղութեան դէմ, որուն «աներեւոյթ» կայմակերպիչն է սիւնիզը:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ «Սոլիտեր»ի վարչական խորհուրդը, զիջատուրութեամբ Նասիբ Շամայի:

Նախագահական պալատի հիւրերէն դարձան նաեւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթի, «Ֆրանսէրէտի» կարգաւոր ցուցահանդէսի մասնակցող գրագէտներու մէկ պատուիրակութիւնը, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ ՄԱԿի բարգաւաճման ծրագիրներու կցորդ Իվ Տուան:

Միւս կողմէ, երէկ կէսօրին նախագահ Լահուտ ստուգեց Տահր Էլ Պայտար մայրուղիին աշխատանքները, յատկապէս այն բաժինը, որ այցելու միւս փողով եկած էր: Նախագահ Լահուտ շեշտեց, որ հարկ է աւարտել մայրուղիի աշխատանքներն ու կուրապատումը, նախքան ձմեռան եղանակը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սոյն յայտարարութեամբ Լիբանանի Հայոց Ազգային առաջնորդարանը կը տեղեկացնէ Յարութիւն Արմենակ Ապաճեանի եւ Րաֆիք Արմենակ Ապաճեանի, որ այլ ընտանիքի մը գերեզմանին մէջ բաղած իրենց հանգուցեալ մօր՝ Զարուհի Ապաճեանի աճիւնները, Ուրբաթ, 9 Յունուար 2004ի առաւօտեան ժամը 10:00ին պիտի տեղադրուին Ֆորըմ Չըպէի Հայոց գերեզմանատան 4րդ յարկի թիւ 53 դարակնի մէջ եւ ձեր ցերեկայինը անհրաժեշտ է աճիւններու փոխադրութեան այս արարողութեանց: Չցերեկայանալու պարագային, արարողութիւնները պիտի կատարուին ձեր բացակայութեան կը հարցին անբողբոջական պատասխանատուութիւնը կը ծանոթանայ ձեր ուսերուն: Մէկ տարուան ժամանակաշրջանի աւարտէն ետք, աճիւնները պիտի ամփոփուին Ֆ. Չըպէի հասարակաց գերեզմանփոսի մէջ:

Սոյն յայտարարութիւնը կը նկատուի պաշտօնական ազդարարագիր:

ԴԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

«ԱՉԴԱԿ»Ի ՖՈՆԾԻՆ

● Տոքթ. Հրաչ Պետրոսեանի մահուան 11րդ տարեկիցին առիթով, Տր եւ տիկին տոքթ. Պողոս Արթիմեան 50,000 Լ. ո.

● Սարգիս Բնիկեանի մահուան առիթով փոխան ծառայակալի, Աֆարեան ընտանիք 20,000 Լ. ո.

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
● Սարգիս Բնիկեանի մահուան առիթով, փոխան ծառայակալի, տիկին Սոյեմի Գապայեան 10,000 Լ. ո.՝ Ս. Վարդանանց եղբայրու Տիգրանի Սիւրբանը:
ՍՏԱՅԱՆՔ
● «ՀՈՂԻ ԴՈՂԸ»
Եղիմայի՝ ԼԵՒՈՆ ԽԵՉՈՅԵԱՆ
«ԳԱՆՆ» Մատենաշար ուսանողական թիւ 36
Խմբագիր՝ ՎԱՐՈՒՄԱՆ ԱՐԵ. ԵՐԿԵՆԵԱՆ
2003
ԿՈՒՉՈՒԻՆ
● Դասատուութիւն մը կարիք ունի ինքնաշարժի վարորդի մը (ուժով) տետրակ ունենալու պայման) եւ գործատուի մէջ աշխատող պաշտօնեաներու: Դիմել՝ հեռ. 01-502329 թիւին:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱԶԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

կը ներկայացնեն՝

ԱՌԱՄԷ

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Նոյեմբեր 18ին ԻՒՆԵՍԿՕ ի արահին մէջ երեկոյեան 8:30-ին տոմսեր՝ Trading Places 01 611600, CD-Theque Ashrafieh - ABC. Համազգային գրախանութ, Նաբիկայի գրախանութ եւ Ազգային Դպրոցներէն

BYBLOS BANK



ՄԱՀԱԶԴ
Տիր ժաք Հաբիմեան
Տէր եւ տիկին զատախազ Ալպէր Գուլուժճի
Օրիորդ Վերժին Պալպուչաքեան
Տիր Զոհրապ Պալպուչաքեան
եւ Համայն ազգականներ կը գումար իրենց մօր, քրոջ եւ հարազատին՝

ԱՐԵԳՆԱԶ ՀԱԶԻՄԵԱՆԻ
(ՏՃԵԱԿ՝ ՊԱԼՊՈՒԶԱԶԵԱՆԸ)
մահը, որ պատահեցաւ Կիրակի, 2 Նոյեմբեր 2003ին, յետ երկարատեւ հիւանդութեան:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Էլբեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆորն Շըպպէի Ազգային գերեզմանատունը:
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին ընկալարանը՝ Էլբեֆիէ, Ժենթաուի, «Մար Լուիս» փողոց, Հաբիմեան շէնք, Երեւան 4 եւ 2 Զորքաշարի 5 Նոյեմբերին:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԵՅՐՈՒԹԻ ԵՒ ԹՐԻՓՈՒԼԻ ԿԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ



Անցեալ կիրակի, «Աղբալեան - Հ. Մ. Ը. Մ.» Մարմնամարզական Համալիրի պասքեթի դաշտին վրայ տեղի ունեցաւ պասքեթպոլի բարեկամական մրցում մը՝ Պէյրուի եւ Թրիփոլի վեթերաններուն միջեւ: Երջանային վարչութեան կազմակերպած այս մրցումը աւարտեցաւ 65-61 արդիւնքով՝ ի նպաստ Պէյրուի կազմին:

Մրցաշարքին մասնակիցները Երջանային վարչութեան ճաշի հիւրն էին եւ երեկոյեան ներկայ գտնուեցան Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի սկաւտական վերամուտին:

Երջանային վարչութիւնը նախաձեռնած է նմանօրինակ ձեռնարկներու շարք մը, որպէսզի շրջաններու միջեւ փոխ յարաբերութիւններ ամրապնդուին եւ հետաւոր շրջաններ կապէ կտրուած չըլլան:

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼ

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄՐՅԱՇԱՐՔԸ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՍԱԿՈՒԵՑԱԻ



Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի կազմակերպած «մինի ֆութպոլ» մրցաշարքը, որ անցնող շաբաթներուն մեծ խանդավարութիւն ստեղծած էր, վերջ գտաւ «Խրուարիա» կազմին յաղթանակով: Երկրորդ եւ երրորդ դիրքերը յաջորդաբար գրաւեցին «Ուէյլ» եւ «Գերմանիա» խումբերը:

ՏԵՅՎԻՏ ՊԵՔՂԱՄ «ԿԸ ՏԱՊԱԼԷ» ԼԵՆՈՔՍ ԼՈՒԻՍԸ



Տէյվիտ Պեքիւմ «նաքաւոր» հարուած մը հասցուցած էր Բոնգրամարտի ծակը կշիռքի աշխարհի ախոյեան Լենոքս Լուիսի, երբ անկէ խլեց «Բրիտանիոյ ամէնէն հարուստ մարզիկ» տիտղոսը:

ՖՈՒԹՊՈՒԼ. ԱՍԻՈՅ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄՆԵՐ

ԼԻՔԱՆԱՆ - ՇԻՄԻՍԱՅԻՆ ՔՈՐԵԱ

Երէկ, երեկոյեան ժամը 8:30ին Պէյրուի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ Լիքանան - Հիւսիսային Քորէա տաք ճակատումը:



Լիքանանի կազմը մրցումէն առաջ...


Մրցումին հաշիւը բացաւ Լիքանանի կազմը, որ իր կոյր արձանագրեց Բ. կիսախաղի 15րդ վայրկեանին՝ փոթորկելով թրիպիւններու տասնեակ հապարտոր համակիրները:

Հիւսիսային Քորէա արդիւնքը հաւասարեցուց անկի ուր: Նշենք, որ մրցումի վերջին վայրկեաններուն Լիքանանի կազմը կորսնցուց քանի մը ոսկի առիթներ:

ԹԵՆԻՍ. ԱՂԶԿԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

ՄՈՐԵՍՄՕ ԿԸ ՅԱՌԱԶԱՆԱՅ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ՝ 67ՐԴ

Երէկ հրապարակուեցաւ աղջկանց թենիսի միջազգային դասաւորումը, որուն առաջին 5 դիրքերուն վրայ ոչ մէկ փոփոխութիւն արձանագրուած է անցնող շաբաթուան ընթացքին: Առաջին տասնեակին միակ յատկանշական փոփոխութիւնը 24-ամեայ Ամելի Մորեսսոյի մէկ դիրք բարձրանալն է՝ Վինըս Ուիլիքսի հաջորդին: Ուիլիքսը, որ վերաւոր է, Յուլիանի ի վեր մրցումներու չէ մասնակցած: Ան պիտի չկրնայ իր մասնակցութիւնը բերել տարեշրջանի աւարտին տեղի ունեցող աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, որոնք տեղի պիտի ունենան Լոս Անճելըսի մէջ:



Մորեսսո ունի 548 կէտ եւ կը մնայ 67րդ դիրքին վրայ:

Ստորեւ դասաւորման պարագլուխի դիրքերուն պարզած պատկերը.

ԿԷՏ	ՊԵՐՅԱԿ
6596	1.- Զիմ Բլիսթըրգ (Պելճիքա)
6461	2.- Ժիւսթին - Նեճէն Արտէն (Պելճիքա)
4400	3.- Սերենա Ուիլիքս (Մ. Ն.)
3057	4.- Լիճեսայ Տեվլըմփորթ (Մ. Ն.)
2746	5.- Ճեմիֆըր Զափրիաթի (Մ. Ն.)
2736	6.- Ամելի Մորեսսո (Ֆրանսա)
2507	7.- Վինըս Ուիլիքս (Մ. Ն.)
2492	8.- Անասթասիա Միսքիցա (Ռուսիա)
2340	9.- Էլենա Տեմնեթիցա (Ռուսիա)
2231	10.- Չանտա Ռուպին (Մ. Ն.)

ՔԱԼՉԻՕ

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ - ԵՈՒՎԵՆԹՈՒՄ՝ 1-1

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան (Քալչիօ) 8րդ հանգրիւանի մրցումներուն, զագաթի ճակատումը Ա. Սե. Միլանի եւ Եուվենթուսի միջեւ վերջ գտաւ 1-1 արդիւնքով: Եուվենթուս մնաց առաջին, իսկ Ա. Սե. Միլան՝ երկրորդ: Մրցումին աւարտէն վեց վայրկեան առաջ Մարքո Տի Վալոյի նշանակած սքանչելի կոյր Եուվէն փրկեց պարտութենէ մը: Դանիացի Եոն Տալթոմասը 65րդ վայրկեանին բացաւ մրցումին հաշիւը, կասկածելի օֆ սայթէ մը ետք: Անոնց արձանագրած այդ հաւասարութենէն օգտուող միակ խումբը հանդիսացաւ Երրորդ դիրքին վրայ գտնուող Ա. Էս. Ռոմա, որ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռեճիանան, միայն երկու կէտով ետ կը մնայ

բերն են: Վերջին երեք դիրքերուն վրայ գտնուող Փերուճիա, Անքոնա եւ Էմփոլի ձախողեցան արձանագրել եղանակի իրենց առաջին յաղթանակը: Ստորեւ 8րդ հանգրիւանի մրցումներուն արդիւնքները.

ԳՍԱՒՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Ա. Սե. Միլան	20 (16-4)
2.- Եուվենթուս	20 (19-8)
3.- Ա. Էս. Ռոմա	18 (16-3)
4.- Փարմա	17 (16-9)
5.- Լազիօ Ռոմա	16 (15-10)
16.- Փերուճիա	5 (10-17)
17.- Անքոնա	3 (4-15)
18.- Էմփոլի	2 (5-20)

ՃԱՏՐԱԿ ԱՇԽԱՐՀԻ ԿՐՏՍԵՐՆԵՐՈՒ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՐԴԱՐԱՑՈՒՑԻՆ ԻՐԵՆՑ ՎՐԱՅ ԴՐՈՒԱԾ ՅՈՅՍԵՐԸ

Յունաստանի Հալիքիքի քաղաքին մէջ շաբաթավերջին իրենց աւարտին հասան մինչեւ 10, 12, 14, 16 եւ 18 տարեկան աղջկանց եւ տղոց աշխարհի ախոյեանութեան մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը բերած էին 87 երկիրներէ ժամանած շուրջ հազար վարպետներ:

Հայաստանը ներկայացնող փոքրիկներն ու պատանիները արձանագրեցին միջակ արդիւնքներ: Անոնց մէջ լաւագոյն արդիւնքը արձանագրողը եղաւ 10 տարեկանէն վար դասակարգին ախոյեանութեան 8րդ դիրքը գրաւող Հայկ Թամազեան (8 կէտ): Միեւնոյն տարիքային դասակարգին մէջ 12րդ եւ 13րդ դիրքերը գրաւեցին յաջորդաբար Սամուէլ Տէր Սահակեան (Եւրոպայի ախոյեան) եւ Գրիգոր Տիւնեան. երկուքն ալ ապահոված էին 7,5 կէտ:

12 տարեկանէն վար խմբակին մէջ Հրայր Սիմոնեան գրաւեց 10րդ դիրքը ապահովելով 7,5 կէտ: Ռուպերթ Յովհաննէսեան գրաւեց 15րդ դիրքը՝ 7 կէտով: Աղջկանց մրցումներուն Շուշաննա Սարգիսեան հաւաքեց 5 կէտ:

14 տարեկանէն վար խմբակին մէջ Չաւեն Անդրեասեան գրաւեց 10րդ դիրքը (7,5 կէտ):

Հայաստանի միւս ներկայացուցիչները չկրցան տեղեր ապահովել վերջնական դասաւորման բարձրագոյն դիրքերուն վրայ:

ՉԻԱՐՇԱԻ «ԿՈՎԿԱՍԻ ԲԱԺԱԿ»

ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԱՆՄՐՑԵԼԻ

Չիարշաի հայրենի վարպետներ Նորայր Ստեփանեան, Ռուպերթ Խաչատուրեան եւ Գեորգ Յովհաննէսեան Թիֆլիսի մէջ տեղի ունեցող միջազգային մրցաշարքին գրաւեցին առաջին երեք դիրքերը: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերէին մարզիկներ՝ Հայաստանէն, Վրաստանէն եւ Արաբիանէն:

Անհատական մրցումներու առաջին դիրքը գրաւող Նորայր Ստեփանեան, որ ի դէպ Հայաստանի ձիարշա ֆետերատիոնի գլխաւոր քարտուղարն է, շահեցաւ «Պի. Էմ. Տապրիլիո 315» ինքնաշարժ մը:

ԱՄԵՐԻԿԱՅԻՔ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ ...

Շարունակուած Ա. Էլէն պատասխանատու նկատող լուրերուն մասին, Ռամսֆելտ ըսաւ, որ շոշափելի որեւէ փաստ չկայ հաստատելու համար, թէ Իրաքի նախկին ղեկավարը կը յարձակուի ընդդէմ իսրայէլի զինուորականները: Ուաշինգթոնի դաշնակից Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլէր դատապարտեց ամերիկեան ուղղաթիւր թիրախ դարձուցած յարձակումը, ինչպէս նաեւ ցաւակցութիւն յայտնեց զոհերուն ընտանիքներուն: Պլէրի բանքերը ըսաւ, որ Լոնտոն եւս կ'ընդունի, որ դժուարութիւններ կան Իրաքի մէջ, սակայն անոնք պիտի չարգելակեն դաշնակից ճակատին յառաջխաղացքը: Միւս կողմէ, Պաքոստանի մէջ սպանուեցաւ իրաքցի մը եւ 15 քաղաքացիներ վիրաւորուեցան, երբ պայթում մը թիրախ դարձուց իրաքցի պաշտօնատար մը, որ սակայն փրկուեցաւ: Ռուսիան թիրախը Պաքոստանի Մուսաբար շրջանի փոխ կառավարիչ Աբլի Համիտն էր:

ԹԷ՝ ԹԷԼ ԱԻԻ, ԹԷ՝ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՔ...

Խօսելով «Ճրնելի նախաձեռնութիւն» կոչուող խաղաղութեան ծրագրին մասին, Շաաթ ըսաւ, որ հակադրութիւն չկայ անոր եւ խաղաղութեան ձեռք բերուած միջոցներին միջեւ: Չինարուի մը մասին ծրագրերը չարգիւծեցին անձնասպանական գործողութիւն մը, որ տեղի ունեցաւ երկրի Այսրյորդանանի Քալքիլիա քաղաքին մօտ: Պաղեստինեան եւ իսրայէլեան աղբիւրներ յայտնեցին, որ պաղեստինցի պատանի մը, որ կը հետապնդուէր իսրայէլեան ուժերու կողմէ, ինքզինք պայթեցուց Այուն զիւղի մէջ, որ մօտ է հրէական բնակեցման վայրի մը: Ըստ աղբիւրներուն, պատանին նկատած է իսրայէլեան ուժերը եւ անոնց ուղղութեամբ վազած է, քանի մը երկվայրկեան ետք՝ պայթեցուցած է մարմնին վրայ գտնուող սկանները:

ԹՈՒՐԲ ԵՐԵՎՈՒՍՆԵՐ ԱՅՍՕՐ ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԸ

ԱՆԳՍՐԱ, 3 (ԱՅՓ).- Թուրք երեսփոխաններ այսօր պիտի քննարկեն փոստով երթուղիներ և տեղեկագիր մը, որ խորհրդարանին կողմից քննարկված բանախոս նախկին 25 նախարարներու շուրջ, որոնց կարգին՝ նախկին վարչապետներ Պիլիպոս Էմելիք եւ Մետուք Երզնկաչյանը խորհրդարանին կ'առաջարկեն քննել անցեալ տասնամակերի տեղի ունեցած դրամատանային բարեկարգումներու, ուժանիւթի մարտի ծրագիրներու, վաճառքներու կապուած կեղծարարութեան արարքներ, որոնք երկրին միջառնադր տոյարներ արժած են:

Երեսփոխանները տեղեկագիրին գծով քննարկութիւն պիտի չկատարեն, սակայն կ'աւելցնեն, որ անոնք բանաձեւեր ներկայացնեն՝ յանձնախումբերու կազմութեան համար, քննութիւնները առջ տանելու նպատակով: Երկարաշունչ այդ գործընթացը կ'վերջոյ կրնայ յանգիլ դատավարութիւններու:

Իշխող Արդարութեան եւ Բարգաւաճման Կուսակցութեան պաշտօնատարներ յայտնած են, թէ նման առաջարկներ պիտի ընեն 7 կամ 8 նախկին նախարարներու առկայութեամբ:

Ընդդիմադիր ժողովուրդին Հանրապետական Կուսակցութիւնը յայտնած է, որ քննութիւն պիտի պահանջէ նախկին 18 նախարարներու, ինչպէս նաեւ էլեւմուտքի ներկայ նախարար Բենյամին Ունաթիթի գծով, որովհետեւ անոր տուած կարգ մը որոշումները ինչ կը վերաբերի սեփականացման, նման եւ անոնց՝ որոնցմով կ'անբաստանուին անոր նախորդները:

ԸՍՏ ՈՒՍԻՈՅ ԵԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒՆ

«ԵՆՈՒՔՈՍ»Ի ՀԱՐՑԸ ԺՆՏԱԿԱՆ ԱՆԴՈՒՂԱՐԶ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅ ԵՐԿՐԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ

Ռուսիոյ էլեւմուտքի նախարար Ալեքսէյ Բուրկովը երկէ շեշտած է, որ «Ենուքոս» ընկերութեան գործադիր տնօրէն Միխայիլ Խոտորովը արգելափակուած է ընկերութեան բաժնետոմսերուն մէջ մասին ստեղծուած ծխական անդրադարձ պիտի չունենան երկրին տնտեսութեան վրայ:

Ռուսական սակարանային շուկաները ծխական պոդեգուտի կրած են «Ենուքոս»ի հետ պետութեան հակամարտութեան պատճառով, իսկ օտար ներդրողները մտահոգութիւն արտայայտած են Ռուսիոյ մէջ ունեցուած իրաւունքներու եւ քաղաքական կայունութեան գծով:

Քուրդի յայտնած է, որ ռուսական մէկ պարագայ չի կրնար ջնջել տնտեսութեան մէջ արձանագրուած «դրական բոլոր փոփոխութիւնները, ամէն ինչ որ եղաւ եւ պիտի ըլլայ շուկային համար»:

Ան «Քուրդի» օրաթերթին ըսած է, որ արտեանին կողմէ վերջնական վճիռ է մը ետք, շուկան «ինքզինք լիովին պիտի վերագտնէ եւ պիտի սկսի բարձրանալ»:

Միւս այդ «Ենուքոս» բանբերը՝ Ալեքսանտր Շատրիկ, երկէ ըսած է, որ Խոտորովը «իրաժարած» ընկերութեան է:

Քուրդի յայտնած է նաեւ, որ Կրեմլինի անձնակազմին ուժեղ պատասխանատու Ալեքսանտր Վոլոշինի անցեալ շաբթուան հրաժարումը «Ենուքոս»ի դէմ առնուած քայլերուն պատճառով, դրական վարկացում մըն է, վայն նկարագրելով իբրեւ «Ելիցինի ժամանակաշրջանին աւարտ»:

Վոլոշին մէկն էր այսպէս կոչուած «ընտանիք»ին վերջին անդամներէն: Անկէ քաղկացած է նախկին նախագահ Պորիս Ելցինի օրէնքի մնացած քաղաքական խումբ մը անձնաւորութիւններէ, որոնք կը մնային ներկայ վարչակարգին մէջ:

ԱԿՎԸՔԱԼԱՔԻ, ՆԻՆՈԾՄԻՆՏԱՅԻ...

Շարունակուած Ա. Էջէն

ցանկերու թերութիւններուն եւ իշխանութեան կողմէ բռնի խախտումներուն, այլեւ ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներու ռոտահարումին: Հարցը այն է, որ ոչ վրացիներով բնակեցուած շրջաններու ընտրական կեդրոններու քուէաթերթիկները պէտք է ըլլան տուեալ ազգային փոքրամասնութեան լեզուով: Սակայն, յատկապէս հայաբնակ շրջաններուն մէջ, քուէաթերթիկները եղած են միայն վրացերէնով: Իբրեւ բողոք, շարք մը տեղամասերու ընտրողներ հրաժարած են քուէարկութեան մասնակցելէ եւ միայն օրւան երկրորդ կէտին մասնակցած են քուէարկութեան:

Վրաստանի խորհրդարանի նախկին պատգամաւոր Վան Բայրուրիան խօսելով Նոյեմբեր 2ին ընտրութիւններուն վտահեռ խորհրդարանի կողմին վերաբերեալ հանրաքուէին մասին դիտել տուաւ, որ եթէ հանրաքուէն որոշէ, որ խորհրդարանի պատգամաւորներու թիր 2007ին 235էն պիտի նուազի 155: Որուն միայն 70ը համամասնական եւ մնացեալը մեծամասնական ընտրակարգով պիտի ճշդուի, ապա յաջորդ խորհրդարանին մէջ հայերը ներկայացուած կ'ըլլան միայն երկու պատգամաւորով (Այսպէս պիտի Նիւնոմիտա): «Փաստօրէն, վերադարձած կ'ըլլանք 1991ի նորանկախ Վրաստանի խորհրդարանի կարգավիճակին, երբ երկրին մէջ ոչ վրացիները խորհրդարանին մէջ ներկայացուած էին միայն երկու հայերով», նկատել տուաւ Բայրուրիան:

ՆԱՆՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՆԵՐ

Վրաստանի խորհրդարանական ընտրութիւններու քուէներու հաշուարկման ընթացքին պարզուած տուեալներուն համաձայն, «Յանուն նոր Վրաստանի» իշխանական դաշինքի եւ ընդդիմադիր «Սահակաշվիլի-Ազգային Շարժում» միաւորման հաշուոյն տուած քուէներու տարբերութիւնը 5 առ հարիւր է: Նախագահ Էտուարտ Շեարտնաձէի ցանկը ստացած է քուէներու շուրջ 26 առ հարիւր, մինչ ընդդիմադիր միաւորումը՝ շուրջ 21 առ հարիւր: Երրորդ դիրքը կը գրաւեն աշխատատեղականները՝ 14 առ հարիւրով, չորրորդ դիրքը՝ Ալյան Ապաշիձէի կուսակցութիւնը՝ 8,5 առ հարիւրով, իսկ հինգերորդ դիրքը կը գրաւէ խորհրդարանի նախկին նախագահ Նիո Պորճանաձէի միաւորումը՝ 8,4 առ հարիւրով:

ԻՐԱՆ ԿՈՐԻԶԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԻՆ ԳԾՈՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏԱՆՆԵՐՈՒՆ ԵՆԹԱՐԿՈՒԻԼԸ ԱՆՁՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՉԷ

Կ'ԸՍԵ ԽԱՄՏԵՆԵԻ

Իրանի հոգեւոր գերագոյն պետ Ալաթոլլա Ալի խամենէի շեշտած է, որ իր կորիզային ծրագիրին առնչութեամբ թափանցիկութեան միջազգային պահանջներուն ենթարկուելու երկրին հաւանութիւնը անձնատուութիւն չէ, զգուշացնելով, որ իրան տակաւին իրեն կը վերապահէ համաձայնութենէն քաշուելու իրաւունքը:


Ան բարձրատիճան պաշտօնատարներու հաւաքի մը ընթացքին շեշտած է, որ երկիրը դիւանագիտական յաղթանակ մը տարած է «սիոնական-ամերիկեան դաւի մը դէմ»:

խամենէի զգուշացուցած է երոպացիները, թէ իրենք նաեւ պէտք է յարգեն իրենց յանձնառութիւնները՝ թէքնիք օժանդակութիւն հայթայթելով եթէ ՄԱԿի կորիզային Ուժանիւթի Միջազգային Գործակալութիւնը որոշէ, որ իրան գործակցած է, ինչպէս նաեւ յարգեն այն խոտուածը, թէ իրանի կորիզային կեդրոններուն աւելի խիստ քննութիւնները իրանեան գերիշխանութեան պիտի չվնասէ:

Իրան ՄԱԿի գործակալութեան հետ համաձայնութիւն գոյացուցած էր երոպական միջնորդութեամբ:

Միւս կողմէ, խամենէի զգուշացուցած է. «Վարչակարգին թշնամիները պէտք չէ երեւակայեն, թէ Իսլամական Հանրապետութիւնը անշարժութեան մատուցած է»:

«Թշնամիներ» բառը ընդհանրապէս կը գործածուի Մ. Նահանգներու եւ Իսրայէլի գծով: Անոնք երկուքը իրանը կ'անբաստանեն կորիզային ուժանիւթի իր ծրագիրը իբրեւ ծածկ օգտագործելու՝ կորիզային կենտրոն մշակումին համար:



ԻՐԱՆՅԵԼ ԿՈՒՔԷ, ՈՐ ԻՐԱՆԻ ԿՐԱՅ ԶՆՇՈՒՄՆԵՐԸ ՄՆԱՆ

Մինչ այդ, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի հետ Ռուսիա գտնուող պաշտօնատար մը երկէ ըսած է, թէ Իսրայէլ կ'ուզէ, որ միջազգային համայնքը շարունակէ Իրանի վրայ ճնշում բանեցնել կորիզային անոր ծրագիրին գծով:

Ռուսիա կը կատուցէ Իրանի կորիզային առաջին հնցը՝ Պուշէինի մէջ: Անիկա խստի քննադատուած է Մ. Նահանգներու եւ Իսրայէլի կողմէ:

ՈՊՊԸՐԹԱՆՆԵՆ ԿՈՉ՝ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԹԱՆԻ

ՊԵՐԼԻՆ, 3 (ԱՅՓ).- ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար Ճորճ Ռոպրթօսը երկուշաբթի օր կ'ինսպեկտիւնի եւ Ե. Միութեան կողմէ ուղղած է մէկ-դի ձգելու իրենց տարակարծութիւնները եւ յարմարելու ապագայի ապահովութեան ընդհանրական նոր սպառնալիքներուն:

Ան Պերլինի մէջ պաշտպանութեան մարտի մասնագէտներու եւ կինտրականներու մասնակցութեամբ մէկ խորհրդածողովին յայտնած է, որ կարիքը կայ ՕԹԱՆ - Ե. Միութեան յարաբերութիւններու, որոնք «կ'ընդգրկեն ապագան եւ ո'չ անցեալը»:

Ան կոչ ուղղած է երկու պողոտաներուն, որոնք բանավէճի մէջ են Ե. Միութեան կինտրական դերակատարութեան գծով, իրենց գործակցութիւնը ընդլայնելու՝ բնագաւառներու մէջ, ուր անոնց աշխատանքները կ'իրար կ'ամբողջացնեն:

Ռոպրթօսը Յունուար 1ին պիտի փոխարինուի Հոլանտայի արտաքին գործոց նախարար Եաստի սը Հուի Շիֆթրի կողմէ:

ԶԱԻԱԽԻ

Զ. Յ. Գ. ԼԻՅԱՆՍԻՆ ԷՄՅ ԳՈՍԻ ՄԵՐՄԻՆ

**ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ
ՑՈՒՅԱԶԱՆԴԵՍ**
Լուսանկարիչ՝ ԶԻՍՐ ԲԱԶԻ

Բացում՝ երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003
Երեկոյեան ժամը՝ 8:00-իմ
Լեւոն եւ Սփիւս Թատրոն մեզ պիտի Գոյէճ

Ծանօթ: Յոգեամբ պիտի շարունակուի
Երեկոյեան ժամը՝ 10:00 - 21:00
Զորեկոյեան ժամը՝ 10:00 - 14:00

ԺՈՂՈՎՐԻՍՅՈՒՆ ԶԱԻԱՔ
Բանայիտ՝ ԸՅԿ. Հայկազուհի Ալվրցեան

- Գեղարու.Եստական Յայտագիր
Երեկոյեան ժամը՝ 4 Նոյեմբեր 2003
Երեկոյեան ժամը՝ 8:00-իմ.
Յակոբ Տէր Լիեյճեան Թատրոն
- ԱՇԿԱԿԵՐՍԱԿԱՆ ԶԱԻԱՔ
Զորեկոյեան ժամը՝ 5 Նոյեմբեր 2003.
Երեկոյեան ժամը՝ 11:00-իմ
Յակոբ Տէր Լիեյճեան Թատրոն
- ԺՈՂՈՎՐԻՍՅՈՒՆ ԶԱԻԱՔ ԵՒ
ՑՈՒՅԱԶԱՆԴԵՍ. ԱՅՆ ԶԱԻ
Զորեկոյեան ժամը՝ 7:00-իմ
Երեկոյեան ժամը՝ 7:00-իմ
«Գ. Կիրակոսեան» օրահ
- ՆԱԿԱՐԶԱԿԱՆ ԶՈՒՅԱԶԱՆԴԵՍ
Զորեկոյեան ժամը՝ 6 Նոյեմբեր 2003
Երեկոյեան ժամը՝ 7:00-իմ
Ազատամարտ Ակումբ Երեկոյեան
- ՈՐՍՈՒՄԻՍՅՈՒՆ ԶԱԻԱՔ
Ուրբաթ, 7 Նոյեմբեր 2003.
Կէսօրուան ժամը՝ 12:00-իմ.
Կազմակերպութեամբ՝
Հայկազուհի Համայնքային «Heritage Club»-իմ.
Հայկազուհի Համայնքային օրահ
- ՆԱԿԱՐԶԱԿԱՆ ԶՈՒՅԱԶԱՆԴԵՍ
Շաբաթ, 8 Երեկոյեան ժամը՝ 9 Նոյեմբեր 2003
Ժամը՝ 10:00-21:00
Երեկոյեան ժամը՝ 21:00-իմ.
Մարգարէ Հայկազուհի Համայնքային 00-իմ

ԻՐԱՆՅԵԼ ԽԻՍՏ ՈՃՈՎ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԵՐՈՊԱԿԱՆ ՀԱՐՑԱԽՈՅՉԻ ՄԸ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Իսրայէլ երկէ խիստ ոճով դատապարտեց երոպական հարցախոյզ մը, ըստ որուն արդիւնքներուն՝ երոպացիները կը հաւատան, թէ հրեական պետութիւնը մեծագոյն սպառնալիքն է համաշխարհային խաղաղութեան:

Պրիքսէլի մէջ Իսրայէլեան դեսպանատունը քննադատեց հարցախոյզն ու երոպացիները, դիտել տալով, որ երոպացիները կարծէք կոյր են եւ չեն տեսներ Իսրայէլացի զոհերն ու Իսրայէլացիներուն տառապանքը: Յայտարարութիւնը աւելցուց, որ երոպացիները Իսրայէլը կը դատեն ահաբեկչական ամենէն վտանգաւոր կազմակերպութիւններու շարքին: Յայտարարութիւնը յայտնեց նաեւ, որ Իսրայէլ ոչ միայն տիրու է, այլեւ՝ ընդլայնած, ոչ թէ երոպացի քաղաքացիներուն դէմ, այլ՝ երոպական հանրային կարծիքը առաջնորդող պատասխանատուներուն դէմ:

Երոպական Միութեան կողմէ կազմակերպուած հարցախոյզի մը արդիւնքը, որ հրատարակուեցաւ երէկ, ցոյց կու տայ, թէ հարցադրուողներուն մեծ մասը համաշխարհային խաղաղութեան մեծագոյն սպառնալիքը Իսրայէլն է: Երկրորդ դիրքի վրայ կու գան Միացեալ Նահանգներ, Հիւսիսային Բորնէա եւ Իրան:

Հարցախոյզին մասնակցած էին Երոպական Միութեան 15 երկիրներէն 500 քաղաքացիներ: Անոնց 59 առ հարիւրը առաջին դիրքի վրայ դրած էր Իսրայէլը:

Երոպական Յանձնաժողովը ըսաւ, որ Իսրայէլի ընդլայնուող արդարացի է: Բանբերը սակայն շեշտեց, որ յանձնաժողովին պարտականութիւնը չէ մեկնաբանել իւրաքանչիւր հարցախոյզի եւ անոր արդիւնքը:

Իտալիա, որ Ե. Միութեան ընթացիկ նստաշրջանի նախագահն է, յայտարարեց, որ հարցախոյզը Միութեան պաշտօնական կեցուածքը չի ներկայացնէ:

ԵՐԿՈՒ ԻՐԱՆՑԻՆԵՐ ԱԶԱՏ ԱՐՉԱԿՈՒԵՑԱՆ ԻՐԱՔԻ ՄԷՋ

ԹԵՀՐԱՆ, 3 (ԱՅՓ).- Իրանցի երկու թղթակիցներ, որոնք Պետական պատկերասփիռի կայանին պաշտօնեաներ են, Երկուշաբթի օր Իրաքի մէջ պատարձակուած են ամերիկեան ուժերու կողմէ՝ 4 ամսուան արգելափակումէ մը ետք: Անոնք յայտնած են, թէ ամերիկեան ուժերու կողմէ արգելափակման ընթացքին «ծանր տանջանքներու» ենթարկուած են:

Երկու թղթակիցները Յուլիա Ին ձերբակալուած են Պաշտօնի հարաւարեւելքը գտնուող Քուր քաղաքին մէջ, մինչ անոնք ամերիկեան խարխուսի մը կը նկարեին:

Ամերիկեան ուժերը օրին յայտնած են, թէ թղթակիցները թերեւս լրտեսութիւն կ'ընէին, թէ-եւ ըստ Պետական պատկերասփիռի կայանին անոնք պարզապէս ծապաւն մը կը պատրաստէին իրաքի ժողովուրդին կեանքին մասին:

Ըստ թղթակիցներէն մէկուն, աւելի քան 50 իրանցիներ արգելափակուած են Պաշտօնի մէջ եւ թէ ինք կը կարծէ, որ անոնց մեծամասնութիւնը Իրաք անցած է Նաժաֆ եւ Քարպայա քաղաքները ուխտագնացութեան համար:

ՄԵՈՒՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐ ԵՐԿՈՒ ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՆԵՐ ՄՊԱՆՆԵՑԻՆ ՄԵՔՔԷԻ ՄԷՋ

ՌԻՍ, 3 (ԱՅՓ).- Մեուտական ապահովութեան ուժեր երկու ծայրայեղականներ սպաննեցին Մեքքէի մէջ տեղի ունեցած բախումի մը ընթացքին, յայտարարեց ներքին գործոց նախարարութիւնը:

Նախարարութեան մէկ պաշտօնատարը ըսաւ, որ իշխանութիւնները յաջողեցան խափանել ահաբեկչական յարձակում մը ահաբեկիչներու կողմէ, որոնք մերժած են յարգել Մեքքէի սրբութիւնն ու Ռամադանի միայր: Ան աւելցուց, որ ապահովութեան ուժերը պաշարեցին ծայրայեղականները, որոնք հակադարձած են կրակ բանալով եւ ձեռնառումներ նետելով: Պաշտօնատարը ըսաւ նաեւ, որ անոնց ինքնաշարժներուն մէջ գտնուած են մեծ քանակութեամբ կենցաղի ու զինամթերք:

